Հետազոտականաշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցայինդպրոց»կրթականի իմնադրամ ՎահրամՍողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտությանթեմա	ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆԳԻՏԵԼԻՔՆԵՐԻՈՒՍՈՒՑՈՒՄԸՏԱՐՐԱԿԱ ՆԴՊՐՈՑՈՒՄ:
Ուսուցչիտվյալներ • Անուն, ազգանուն,հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ.հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	ԿԱՐԱՊԵՏՅԱՆԱՆՈՒՇ ԴԱՍՎԱՐ 098-93-91-02 Մայրենի, մաթեմատիկա,տեխնոլոգիա,թվային գրագիտություն 2-րդ դասարան
Ուսումնական հաստատությանտվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ.հասցե (տնօրենության) • Webկայքիհասցե	ՀՀ Արարտի մարզ ք.Վեդիի ԳագիկՄարգարյանի անվան հմ.1 հիմնական դպրոց ՊՈԱԿ (0234) 2-41-80 ararat1@schools.am ՀՀ Արարատի մարզ ք.Վեդի Արցախի 5

Նպատակը և հետազոտականհարցը	Նպատակը՝ մշակել և փորձարկել ձևաբանական գիտելիքների ուսումնասիրման գործընթացում հետաքրքրաշարժ և իրադրային խաղերի համակարգ, որը կնպաստի կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացմանը, և դրանց արդյունքների հիման վրա ներկայացնել մեթոդական երաշխավորություններ: 1.ուսումնասիրել թեմայի վերաբերյալ առկա լեզվական և մեթոդական գրականություն, 2.դիտարկել 1-4-րդ դասարանների մայրենիի ծրագրերում և դասագրքերում ձևաբանական գիտելիքների տեղը և դերը, 3.բացահայտել, թե տարրական դասարաններում ինչ բնույթի աշխատանքներ են իրականացվում կրտսեր դպրոցականների ձևաբանական գիտելիքների ուսումնասիրման գործընթացում, 4.մշակել և փորձարկել կրտսեր դպրոցականների ձևաբանական գիտելիքների յուրացմանը և բառապաշարի հարստացմանը նպաստող հետաքրքրաշարժ և իրադրային խաղերի համակարգ Հարց՝ Ինչպես կազմակերպել ձևաբանական գիտելիքների ուսուցումը տարրական դասարաններում Վեդիի **h1** հիմնական դպրոցի օրինակով:

Ո՞րառանցքային կոմպետենցիային/կարողունակությաննէ ուղղվածնպատակի ուսումնասիրությունը	1. Լեզվական գրագիտություն և կարողունակություն 2.Սովորել սովորելու կարողունակություն
Հետազոտությանթիր ախայինխումբըևշրջանակը /քանակ, սեռայինբաշխում/	Թիրախային խումբը կրտսեր դպրոցի 2-րդ դասարանցիներն են:Առաջին 1-2-րդ դասարանների մայրենիի դասագրքերում զետեղված նյութերի ուսումնասիրման հիմքում ընկած են քերականական նախագիտելիքները: Ընտրված նյութերի միջոցով սովորողները գիտելիքներ են ձեռքբերում առարկա, առարկայի կատարած գործողության, առարկայի հատկանիշի մասին, կարողանում են տարբերել անձ և իր ցույց տվող առարկաները, կարողանում են խմբավորել եզակի և հոգնակի թվով առարկաները, հատուկ և հասարակ անունները: Դասագրքերում զետեղված են տարաբնույթ առաջադրանքներ, որոնք ամրապնդում են առաջին և երկրորդ դասարանում ձեռք բերած ձևաբանական նախագիտելիքները: Մասնակցել է 30 աշակերտ, 10աղջիկ և 20տղա:

Օգտագործվածի ետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝քանական հետազոտություն՝ հարցաթերթիկիմիջոցով, որակական հետազոտություն՝խո րինհարցազրույցիմիջ ոցովեւայլն)	Մեդիա գործիքներ,դասագրքեր,բնագիր, տեսաֆիլմեր, օժանդակ գրականություն, կիրառվել է քանակական մեթոդ, հարցաթերթիկ:
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	1.08.2023-10.09.2023

Գրականությանակնարկ • Մեջբերումներ արդենարված հետազոտություններից, • Մեջբերումներ գրականությունից,տեղեկության վստահելիաղբյուրներից: **<u>Պարտադիրէկատարելի դումաղբյուրին</u>**	ուսումնասիրելով և ներկայացնելով տարրական դասարաններում ուսումնասիրվող քերականական նախագիտելիքներն ու ձևաբանական տարրական գիտելիքները, մայրենի լեզվի չափորոշիչն ու ծրագիրը, ինչպես նաև տարրական դասարանի մայրենիի դասագրքերը, եկանք այն համոզման, որ աշակերտները ձևաբանական նախագիտելիքներ են ձեռքբերում առաջին և երկրորդ դասարաններում, որը ձևաբանական գիտելիքների ուսումնասիրման առաջին փուլն է: Իմանում են մեծատառի գրության մասին, առարկայի եզակի և հոգնակի թվի մասին, բառերի ընդհանրացնող անունների մասին, օժանդակ բայի մասին: 1. Ասատրյան Մ.Ե., Ժամանակակից հայոց լեզու: Ձևաբանություն: ՈՒս. ձեռնարկ հայկ. բանասիր. ֆակ. համար/Երևանի պետ. համալս., 4-րդ հրատ.: Եր.: Երևանի համալս. հրատ., 2004.432 էջ:
Հետազոտությանընթացքը	**ԳԼՈՒԽ 1.** **ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ** **1.2 Ձևաբանական գիտելիքների տեղը 1-4-րդ դասարանի մայրենիի դասագրքերում**

ԳԼՈՒԽ 1.

ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

1.2 Ձևաբանական գիտելիքների տեղը 1-4-րդ դասարանի մայրենիի դասագրքերում

Ուսումնասիրելով 1-4-րդ դասարանների մայրենիի դասագրքերը, նկատեցինք, որ ձևաբանական գիտելիքների ուսումնասիրումը տարրական դասարաններում իրականացվում է երկու փուլով: Առաջին փուլում 1-2-րդ դասարանների մայրենիի դասագրքերում զետեղված նյութերի ուսումնասիրման հիմքում ընկած են քերականական նախագիտելիքները: Ընտրված նյութերի միջոցով սովորողները գիտելիքներ են ձեռքբերում առարկա, առարկայի կատարած գործողության, առարկայի հատկանիշի մասին, կարողանում են տարբերել անձ և իր ցույց տվող առարկաները, կարողանում են խմբավորել եզակի և հոգնակի թվով առարկաները, հատուկ և հասարակ անունները:

Դասագրքերում զետեղված են տարաբնույթ առաջադրանքներ, որոնք ամրապնդում են առաջին և երկրորդ դասարանում ձեռք բերած ձևաբանական նախագիտելիքները:

Ներկայացնենք այդ առաջադրանքներից մի քանիսը.

Դասագիրքը, թեմատիկ խումբը, ուսուցանվող նյութի հեղինակը, վերնագիրը, էջը	**Լեզվական աշխատանքը**	**Նպատակը**
«Մայրենի-1» Վ. Սարգսյան «Իմ ընտանիքը», Սիլվա Կապուտիկյան, «Կարծում եք թե կատա՞կ է», էջ 31	**Տո՛ւր ընդհանուր անվանումը.** Մեխակը, վարդը, շուշանը, նարգիզը, անմոռուկը ծաղիկներ են: Տանձը, խնձորը, ծիրանը, խաղողը, բալը, կեռասը...են:	Միևնույն տեսակի առարկաներին տրվող ընդհանուր անվան վերաբերյալ գիտելիքների ամրակայում:

«Մայրենի-1» Վ. Սարգսյան «Մեր հայրենիքը Հայաստանն է»,Էդվարդ Միլիտոնյան, «Հայաստանի քարերը», էջ 40	**1.Լրացրո՛ւ բաց թողնված բառերը:** Մանուկները....դպրոց: Ծաղիկները....գարնանը: Երեխաներըը....դրսում: **2.Ինչպիսի՞ն է քարը, ինչպիսի՞ն՝ ծաղիկը.** քնքուշ, ամուր, ծանր, անուշահոտ, հսկայական, դալար, կարծր, ճկուն: **3.Շարունակի՛ր.** արտ – արտեր հետք -	**1.**Առարկայի գործողություն ցույց տվող բառերի մասին գիտելիքների ամրակայում: **2.**Առարկայի հատկանիշ ցույց տվող բառերի մասին գիտելիքների ամրապնդում: **3.**Առարկայի եզակի և հոգնակի թվի վերաբերյալ գիտելիքների ամրակայում:
«Մայրենի-1» Վ. Սարգսյան «Մեր բարեկամ կենդանիները», «Կատակ», Վաս, էջ 44	**Առարկացույցտվողբառերից ստացի՛րգործողությունցույցտվողբառեր.** Շարունակի՛ր նկար – նկարել կանչ.... պար....	Առարկացույցտվողբառերի ցգործողությունցույցտվող բառերստանալուկարողություններիամրապնդում:

1-ին դասարանի մայրենիի դասագրքում[1] զետեղված առաջադրանքի միջոցով գործնական ճանապարհով գիտելիքներ է հաղորդվում գոյականի ընհանուր անվան մասին, իսկ սույն դասագրքի[2] մեկ այլ առաջադրանքի շուրջ աշխատանքն ընդլայնում է աշակերտների գիտելիքներն առարկայի հատկանիշ և գործողություն ցույց տվող բառերի, ինչպես նաև գոյականի թվի վերաբերյալ՝ առանց անվանելու: Նույն դասագրքում[3]զետեղված լեզվական մյուս առաջադրանքի միջոցով գործնական

[1]Սարգսյան Վ. , Մայրենի-1:-Եր. :Մանմար, 2019. -էջ 31:
[2]Սարգսյան Վ. , Մայրենի-1:-Եր. :Մանմար, 2019. -էջ 40:
[3]Սարգսյան Վ. , Մայրենի-1:-Եր. :Մանմար, 2019. -էջ 44:

ճանապարհով ձևավորվում է առարկա ցույց տվող բառերից գործողություն ցույց տվող բառեր ստանալու կարողությունները:

Դասագիրքը, ուսուցանվող նյութի վերնագիրը, էջը	**Լեզվական աշխատանքը**	**Նպատակը**
«Մայրենի 1», Ա.Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան, «Կորած օրը», էջ 16-17	**Այս բառերը գրի՛ր որպես մարդկանց անուններ.** արև, լուսին, աստղիկ, մանուկ, անուշ, վահան, ազնիվ, զվարթ:	Հատուկ և հասարակ գոյականների վերաբերյալ գիտելիքների ամրապնդում(առանց դրանք անվանելու):
«Մայրենի 1», Ա.Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան, «Կանչում են ձեզ», էջ 60	**Կազմի՛ր բառերի կապակցություններ բառափնջերը ճիշտ միացնելով նկար-բառերին.**	Առարկա և համապատասխան առարկայի հատկանիշ ցույց տվող բառերը կապակցելու կարողությունների ձևավորում:

Ներկայացնենք 3-4-րդ դասարանի մայրենիի դասագրքերում զետեղված առաջադրանքներից մի քանիսը.

Դասագիրքը, թեմատիկ խումբը, ուսուցանվող նյութի հեղինակը, վերնագիրը, էջը	Լեզվական աշխատանքը	Առաջադրանքի նպատակը

«Մայրենի-3», Վ.Սարգսյան և ուրիշներ «Փոքրիկ պատուհան դեպի մեծ աշխարհ»,Յուրի Սահակյան, «Մութի և լույսի ծնունդը», էջ 22-23	**Շարունակի՛ր** Ես ապրում եմ: Մենք ապրում ենք: Դու. . . : Դուք. . . . : Նա. . . : Նրանք. . . :	Բայի դեմքի վերաբերյալ գիտելիքների ամրակայում:

Երրորդ դասարանի մայրենիի դասագրքում[4] զետեղված առաջադրանքի միջոցով սովորողները գործնականորեն ծանոթանում են բայի դեմքին: Նույն դասագրքում մեկ այլ առաջադրանքի միջոցով էլ ամրապնդվում է գոյականին տրվող հարցերի մասին գիտելիքները: Մյուս առաջադրանքը ամրապնդում է հատուկ և հասարակ գոյականների վերաբերյալ սովորողների ունեցած գիտելիքները: Մեկ այլ Էջում զետեղված առաջադրանքները վերաբերում են գործողություն և հատկանիշ ցույց տվող բառերին:

«Մայրենի 4» դասագրքերի լեզվական բաժնում խորացվում է գիտելիքները գոյական, բայ, ածական խոսքի մասերի ուղղությամբ և արդեն ուսումնասիրվում է թվական անունն իր տեսակներով: Դասագրքի լեզվական նյութերի բաժնում աշխատանքներ է կատարվում նաև թվականի ուղղագրության ուղղությամբ:

Ներկայացնենք 4-րդ դասարանի մայրենիի դասագրքում[5] տեղ գտած մի քանի առաջադրանք, որոնց հիմքում ընկած է թվականի վերաբերյալ գիտելիքների ամրակայումը:

Դասագիրքը, թեմատիկ խումբը, ստեղծագործության հեղինակը, վերնագիրը, էջը	Լեզվական աշխատանքը	Առաջադրանքի նպատակը

[4]Սարգսյան Վ. Ա. , Թորոսյան Կ. , Խաչատրյան Հ. , Ջիլավյան Ե. ,Մայրենի-3:Մաս 1: -Եր. : «ՄԱՆՄԱՐ», 2020, էջ 23:

[5]Թորոսյան Կ. , Խաչատրյան Կ. , Սարգսյան Վ. Ա. ,Ջիբուխչյան Կ. , Մայրենի-4:Մաս2:-Եր. : «ՄԱՆՄԱՐ», 2019, էջ 91, 97, 98:

«Մայրենի-4», Վ.Սարգսյան և ուրշներ, «Ես այսպե՛ս ասեմ, դու այնպե՛ս հասկացիր», 1.Աթաբեկ Խնկոյան, «Ճպուռն ու մրջյունը», էջ 91, 2.Վարդան Այգեկցի, «Այրի կինը և որդին», էջ 97, 3.Եզոպոս, «Առյուծն ու նապաստակը», էջ 98	**1.Քանակական թվականներին ավելացնելով -րորդ կամ -երորդ ածանցները ստացի՛ր դասական թվականներ.** մեկ–առաջին, հինգ–հինգերորդերկու–երկրորդվեց -....երեք–երրորդյոթ -....չորս–չորրորդութ - .. ինը-ինևերորդ, 11-..., 25-..., 68-...: **2.Գրի՛ր մինչև 20 երկնիշկենտթվերըևդրանքդարձրո՛ւ դասական թվականներ:** **3.Խմբավորի՛ր թվականները.քանակականթվականները դարձրո՛ւ դասական և՝ հակառակը.** չորրորդ, երեք, տաս, ինևերորդ, իննսուն, երեսուն, քառասուն,	Առարկայի թիվ և թվային կարգ ցույց տվող բառերի՝ թվականների վերաբերյալ գիտելիքների ամրապնդում:

Դերանվան, շաղկապի և ձայնարկության մասին գիտելիքները հաղորդվում են

գործնականորեն՝ բնագրերի շուրջ աշխատելիս՝ առանց նրանց տեսակներն առանձնացնելու:

Տարրական դասարաններում շաղկապի մասին տրվում է միայն ընդհանուր ծանոթություն: Շաղկապի մասին նախագիտելիքներ տրվում են գրաճանաչության այբբենական շրջանում, երբ երեխաները դասագրքի բնագրերում հանդիպում են ու, և, իսկ, բայց և նման այլ բառերի:

Շաղկապի մասին գիտելիք ձևավորելուց առաջ պետք է կրկնել բարդ նախադասության մասին աշակերտների ունեցած գիտելիքները: Սա պետք է իրականացնել տարաբնույթ վարժությունների միջոցով:

Առաջադրանք. Օգտագործելով **որովհետև, սակայն, և, երբ** բառերը՝ հետևյալ պարզ նախադասություններից ստացի՛ր բարդ նախադասություններ և գրի՛ր:

Այգեպանի դեմքը զայրույթից կարմրեց: Նա տեսավ չորացած այգին: Արևը լուսավորեց երկնքի ամպերը: Ներքևում դեռևս քնած էին մռայլ ժայռերը:

Ձայնարկությանը նույնպես ծանոթանում են միայն գործնականորեն:Այսխոսքիմասինգաղափարենկազմումարտահայտիչընթերցանութ յանժամանակ, բացատրվումէ, որայնբառերը, որոնքերկարացմանկամբացականչությաննշանենկրումպետքէայլկերպընթերցել:

- Ո՞ր նկարը ի՞նչ հույզով է արտահայտվում. վախ, ցանկություն, ուրախություն, ափսոսանք:
- Արտագրի՛ր նախադասությունները՝ կից գրելով համապատասխան զգացմունք արտահայտող բառերը[6]:

[6]Թորոսյան Կ. , Խաչատրյան Կ. , Սարգսյան Վ. Ա. ,Ջիբուխչյան Կ. , Մայրենի-4:Մաս2:-Եր. : «ՄԱՆՄԱՐ», 2019, էջ 131:

Այսպիսով, ուսումնասիրելով և ներկայացնելով տարրական դասարաններում ուսումնասիրվող քերականական նախագիտելիքներն ու ձևաբանական տարրական գիտելիքները, մայրենի լեզվի չափորոշիչն ու ծրագիրը, ինչպես նաև տարրական դասարանի մայրենիի դասագրքերը, եկանք այն համոզման, որ աշակերտները ձևաբանական նախագիտելիքներ են ձեռքբերում առաջին և երկրորդ դասարաններում, որը ձևաբանական գիտելիքների ուսումնասիրման առաջին փուլն է: Իմանում են մեծատառի գրության մասին, առարկայի եզակի և հոգնակի թվի մասին, բառերի ընդհանրացնող անունների մասին, օժանդակ բայի մասին:

Երրորդ և չորրորդ դասարաններում սովորողների առարկա, գործողություն, հատկանիշ ցույց տվող բառերի մասին ունեցած գիտելիքները ընդլայնվում են և դրանց ավելանում են նաև առարկայի թիվ, կարգ ցույց տվող բառերի՝ թվականի, գոյական, ածական, թվական անուններին փոխարինող բառերի՝ դերանունների, շաղկապի և ձայնարկության մասին գիտելիքները: Ուսումնասիրելով այդ խոսքի մասերի ուսումնասիրման ընթացքում կատարվող վարժությունների համակարգն ու կիրառվող խաղային իրավիճակները, ծանոթանալով տարրական դասարանների մայրենիի ծրագրում ներկայացված գործունեության ձևերին՝ համոզվեցինք, որ իսկապես իրադրային և հետաքրքրաշարժ խաղերը կարևոր են լեզվական գիտելիքների ուսումնասիրման գործընթացում, քանի որ ըստ չափորոշչի և ծրագրի մայրենի լեզվի և գրականության ուսուցումը նպաստում է սովորողների մտքերի, զգացմունքների ու ապրումների արտահայտմանը, տվյալ իրադրության պահանջով և բազմազան ոճերի կիրառությամբ բանավոր ու գրավոր խոսք կազմելու հմտությանը, ստեղծագործական կարողությունների բացահայտմանն ու դրանց հետագա մշակմանը, լեզվական նյութի ուսուցմանը:

Ըստ չափորոշչի՝ առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրմանը՝ ուսուցանվող նյութը ավելի մատչելի ու գրավիչ դարձնելու, յուրացման գործընթացն արագացնելու, սովորողի ինքնուրույն աշխատանք կատարելու ունակությունները զարգացնելու, նոր տեղեկատվություն ստանալու միջոցներին տիրապետելու և առհասարակ ինքնակրթության նախաձեռնությունը խթանելու նպատակով [7]:

Ուստի իրադրային խաղերի և հետաքրքրաշարժ վարժությունների կիրառումը

---

[7] Հայոցլեզու, գրականություն, Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական ծրագիր (1-9-րդ դասարան): Եր. ,Անտարես, 2011, էջ 7:

անհրաժեշտ է և կարևոր ուսումնական գործընթացում:

Հայերենում առանձնացվում է տասը խոսքի մաս՝ գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ, կապ, շաղկապ, վերաբերական, ձայնարկություն: Սակայն տարրական դասարաններում ուսումնասիրում են խոսքի մասերը հետևյալ հերթականությամբ.



Մայրենի լեզվի լեզվի տարրական դասընթացի ուսումնասիրությունն իրականացվում է երկու փուլով՝ լեզվական նախագիտելիքների ուսումնասիրում և լեզվական տարրական գիտելիքների ուսումնասիրում:

Նախագիտելիքների ուսումնասիրման փուլում կարևորվում են այն հասկացությունների յուրացումը և ունակությունների ձևավորումը, որոնք անհրաժեշտ են երեխաների խոսքի և մտածողության զարգացման, հասկանալով կարդալու և գրելու տարրական կարողությունների ձեռքբերման, լեզվամտածողության զարգացման գործընթացում [8]:

Գործնական վարժությունների կատարման միջոցով նրանք համոզվում են, որ այդ բառերից յուրաքանչյուրը որոշակի իմաստ ունի. ցույց է տալիս իր, անձ, երևույթ, հատկանիշ, զգացում, գործողություն: Իհարկե դրանց մասին գիտելիքներն ամրապնդվում են ուղղորդող հարցերի միջոցով: Կարողանում են առարկաները խմբավորել ըստ ընդհանրացնող անունների:

Ուսուցման այս փուլում կարևոր է, որ երեխաներն ըմբռնեն նաև բառի և նրա ցույց տված առարկայի տարբերությունները: Գործնականորեն պետք է հասնել նրան, որ երեխաները շոշափելով, արտասանելով, գրելով հասկանան, որ առարկաները կարելի է վերցնել, շոշափել, իսկ դրանց անունները՝ բառերը, միայն արտասանել, գրել, կարդալ:

Առարկաների թվի մասին երեխաները գաղափար են ունենում դեռևս նախադպրոցական տարիքում և խոսքում ճիշտ են գործածում գոյականի եզակի և հոգնակի թվերը: Այս փուլում աշակերտները սովորում են գործածել -եր և -ներ հոգնակիակերտ մասնիկները: Իմանում են նաև, որ մարդկանց անունները,

[8] Գյուլամիրյան Ջ. Հ. , Մայրենի ուսուցման մեթոդիկա: «Զանգակ» հրատ. ,2018. -344էջ, էջ 216

աշխարհագրական տեղանունները և այլն գրվում են մեծատառով, իհարկե առանց սահմանելու:

Տարրական գիտելիքների ուսումնասիրման փուլում տրվում են ընդհանուր հասկացություններ խոսքի մասերի վերաբերյալ, որոշվում է, թե բառն ինչի համար կարող է օգտագործվել խոսքի մեջ: Ուսումնասիրվում է բառի խոսքի մաս լինելու հատկությունը՝ քերականական արժեքը, իսկ քերականական արժեքը որոշելու համար անհրաժեշտ է գիտենալ բառի քերականական հատկանիշները: Տարրական դասարաններում ուսումնասիրվում է անձ և իր ցույց տվող, հատուկ և հասարակ գոյականները, գոյականի թիվը, բայի դեմքը, թիվը, ժամանակը, ածականը, թվականի տեսակները, դերանունը: Գոյականի, բայի, ածականի ձևափոխությունների ուսումնասիրումը իրականացվում է առանց «հոլովում» և «խոնարհում» տերմինները գործածելու:

Տարրական դասարանում դերանունը, շաղկապը և ձայնարկությունը ուսուցանվում են ոչ միայն քերականական ձևավորման, այլև խոսքում կիրառվելու առանձնահատկությունների և ոճական նպատակադրության տեսակետից:

Առարկայական նոր չափորոշչի և ծրագրի համաձայն տարրական դպրոցում դերանվան, շաղկապի և ձայնարկության ուսումնասիրության ժամանակ ուշադրություն է դարձվում վերջիններիս գործառական և ոճական արժեքին, համապատասխան վարժությունների միջոցով ամրապնդվում է դրանց գործնական կիրառությունը խոսքում, որն էլ նպաստում է ինչպես կապակցված խոսք կազմելու հմտությունների ձևավորմանը, բառապաշարի հարստացմանը, այնպես էլ սովորողների ճանաչողական կարողությունների, տրամաբանական մտածողության զարգացմանը, հասկացական դաշտի ընդլայնմանը:

Այսպիսով խոսքի մասերի ուսուցման ժամանակ առաջնությունը տրվում է լեզվի գործնական կիրառության(լսելու, խոսելու, կարդալու, գրելու) կարողությունների զարգացմանը, իսկ տեսական գիտելիքները տրվում են նվազագույն չափով, որքանով դրանք կարող են նպաստել նշված խնդրի լուծմանը:

ԳԼՈՒԽ 2.

ԻՐԱԴՐԱՅԻՆ ԵՎ ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ ԽԱՂԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀՆԱՐ

2.1 Իրադրային և հետաքրքրաշարժ խաղերի նշանակությունը մայրենիի դասերի ընթացքում

Ինչպես գիտենք, ուսումնական խաղը հատուկ կազմակերպված զբաղմունք է, որը երեխաների մեջ առաջ է բերում հուզականություն, հաղթելու ձգտում, խաղի միջոցով նա ձևավորվում է որպես անհատ, վերջիններս երեխայի կամքից անկախ նրան ընդգրկում են ուսումնական գործունեության մեջ, որից էլ կախված է նրա հետագա հաջողությունները: Խաղը ցանկացած ուսումնական նյութի յուրացման գործընթաց դարձնում է հետաքրքրաշարժ, գործունեությունը՝ գրավիչ, թեթևացնում գիտելիքների և կարողությունների ձեռքբերման գործընթացը:

Մայրենիի դասերի ժամանակ անցկացրած խաղերը երեխաների մեջ առաջացնում են ճանաչողական հետաքրքրություններ և ընդգծված սեր գրքի, սովորելու նկատմամբ:

Դիդակտիկ խաղերն իրենց նպատակադրումներով արդյունավետ ուսումնական գործունեություն ապահովող այն հնարներից են, որոնք զգալիորեն նպաստում են գիտելիքների ձեռքբերմնան գործընթացում հետաքրքրության և բարձր դրդապատճառայնության առաջացմանը:

Ուսուցման գործընթացում խաղն ունի երեք գործառույթ. «Առաջին, ամենապարզ գործառույթը ուսումնական գործընթացը թեթևացնելը և այն աշխուժացնելն է: Այս դերը կատարում են խաղում տեղ գտած հեքիաթային, երևակայական տարրերը, հետաքրքրաշարժ նկարներն ու ուշագրավ բնագրերը և այլն:

Երկրորդ գործառույթը երևակայության զարգացումն է ուսումնական գործընթացի թատերականացման ճանապարհով. խաղային ձևերը դերային տարրեր են մտցնում երևակայական դերակազմի մեջ: Դերասանական հնարներն օգտագործվում են դերային երկխոսությունների և մենախոսությունների մեջ, դերերով կարդալու,

հեքիաթների, առարկաների բեմականացման, տարաբնույթ վարժությունների ժամանակ:

Երրորդ գործառույթը մրցութային է: Խաղերը, սովորաբար մրցութային տարրեր են պարունակում, որոնք երեխաներին ակտիվացնում են, ձևավորում առաջատարության ձգտում..., պարզագույն մակարդակից խաղն անցնում է օլիմպիադաների, տեստավորումների, գրական ստեղծագործությունների, գիտելիքների որակի և խորության սահմաններում՝ մրցույթների:

Խաղի նշված երեք գործառույթներն իրենցից ներկայացնում են խաղից, զվարճանքից ուսուցում գնացող աստիճաններ՝ առաջացնելով ճանաչողության գործընթացով տարվածություն, գրավվածություն: Սա խաղից՝ ստեղծագործություն, գիտական տրամաբանություն, դպրոցական ծրագրից առաջ անցնելուն տանող գործունեության բարձրագույն աստիճանն է» [9]:

Որպեսզի ուսուցման գործընթացում խաղերը նպաստեն սովորողների մտավոր գործունեության ակտիվացմանը, անհրաժեշտ է՝

- ✔ ընտրել դասի կրթադաստիարակչական խնդիրներին համապատասխան խաղեր,
- ✔ խաղի բովանդակությունը համապատասխանեցնել երեխաների պահանջմունքներին և ճանաչողական հետաքրքրություններին,
- ✔ խաղի մեջ նախատեսել հաղթահարելի այնպիսի դժվարություններ, որոնք երեխաներից կպահանջեն ուշադրության, հիշողության լարում, մտքի ակտիվացում,
- ✔ հիմնավորված ընտրել դասի այն հատվածը, որի ժամանակ պիտի իրականացվի դիդակտիկ խաղը[10]:

Խաղերի դասակարգման տարբեր մոտեցումներ կան, բայց ըստ էության բոլոր տեսակներն էլ նպաստում են երեխաների մտքի և ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը:

Խաղի ժամանակ երեխաները ոչ միայն իրականություն են դարձնում իրենց ձգտումները, երևակայածն ու տպավորությունները, այլև համոզվում են գիտելիքների անհրաժեշտության և խաղի ժամանակ հաղթելու համար դրանց պարտադիր իմացության մեջ՝ դրանով ոչ միայն բավարարելով իրենց հիմնական

---

[9] Գյուլամիրյան Ջ. Հ. , Խաղալովսովորեմ:/. -Եր. : «Զանգակ-97», 2009, էջ 13

[10] Գյուլամիրյան Ջ. Հ. , Խաղալովսովորեմ:/. -Եր. : «Զանգակ-97», 2009, էջ 14

հոգեկան պահանջմունքները, այլև ձեռք բերելով ուսումնական համոզմունքներ, ինքնագնահատական:

Խաղը դիտարկվում է որպես համագործակցային ունակություններ ձևավորող, երեխայի միջանձնային հարաբերությունները կարգավորող, մանկական կոլեկտիվին աստիճանաբար ադապտացնող անփոխարինելի միջոց:

Խաղի տեսակի ընտրությունը կախված է նրա առավելագույն օգտագործման հնարավորություններից:

Իրադրային խաղերը երեխայի խոսքը դարձնում են ազատ, անկաշկանդ, զարգացնում են երևակայությունը:

Իրադրային խաղը պետք է ունենա ուսումնական նպատակ, այսինքն հստակ պետք է նշել, թե ինչ ուսումնական խնդիր պետք է լուծվի տվյալ խաղի միջոցով: Պետք է ունենա բովանդակություն, պետք է նկարագրվի տվյալ իրավիճակը, որպեսզի երեխան կարողանա արտահայտել իր խոսքը, և որ ամենակարևորն է, ունենա մանկավարժական վերջնարդյունք:

Իրադրային խաղը կազմված է երեք փուլից՝ նախապատրաստական, խաղի ընթացք և խաղի վերլուծություն, ամփոփում:

Իրադրային խաղերն առանձնակի նշանակություն ունեն կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացում: Իրադրային խաղերում ներկայացվում են իրավիճակներ, որի ընթացքում աշակերտները ըստ իրավիճակի պետք է կարողանան կազմել կապակցված խոսք՝ ներկայացնելով երկխոսություններ և մենախոսություններ: Իրադրայի խաղերի կազմակերպման ժամանակ աշակերտներին առաջարկվում է տարբեր ստեղծագործություններից կամ այլ իրադրություններից ընտրել զանազան դերեր, խաղալ կամ կազմել խոսքային դրվագներ: Այդ խոսքային դրվագները, որպես կանոն, պրոբլեմային են և յուրաքանչյուր մասնակիից ստանձնում է որևէ դեր: Իրադրային խաղերի ընթացքում ստեղծված իրավիճակների լուծումներն աշակերտները տալիս են՝ հիմնվելով իրենց կենսափորձի վրա: Ուստի շատ կարևոր է, որ իրադրային խաղերը կազմակերպելիս հաշվի առնել աշակերտների տարիքային և անհատական առանձնահատկությունները, ուսումնական առարկայի առանձնահատկությունները[11]:

Իրադրային և հետաքրքրաշարժ խաղերը կազմակերպելիս պետք է հստակ

---

[11]Եսոյան Տ.Վ., Կրտսերդպրոցականներիհաղորդակցականկարողություններիձևավորումըիրադրայինխաղերիմիջոցով, Հայագիտականհանդես, Երևան 2019, էջ 149

պատկերացնել, թե ի՞նչ նպատակով է այն անցկացվում, ինչպե՞ս և ի՞նչ պայմաններում պետք է այն անցկացվի, ի՞նչ խնդիրներ պետք է լուծվեն այդ ընթացքում, ի՞նչ դժվարությունների կհանդիպեն աշակերտները, կկարողանա՞ն արդյոք քննադատություններ կատարել, ստեղծագործել և հասնել այն մանկավարժական խնդրի լուծմանը, որն էլ հենց դրված էր խաղի սկզբում:

Իրադրային խաղերի միջոցով ստեղծվում են այնպիսի մանկավարժական իրավիճակներ, որոնք աշակերտներին մղում են հաղորդակցվել միմյանց հետ, դատողություններր անել ստեղծված իրավիճակի շուրջ, քննադատություններ կատարել, ստեղծագործել և ի վերջո հասնել այն խնդրի լուծմանը, որն ի սկզբանե որոշված էր: Ահա թե որքան կարևոր է իրադրային խաղի ճիշտ կիրառումն ու անցկացումը դասի համապատասխան փուլում:

Երեխաները հաճույքով են ներգրավվում իրադրայի խաղերի մեջ, ակտիվորեն մասնակցում են քննարկումներին, կարողանում են ազատ արտահայտել իրենց խոսքը, հույզերը, որոնց ընթացքում էլ հաղորդակցական կարողություններ է ձևավորվում:

Դասի տարբեր փուլերում անցկացվող խաղերի տեսակներից կարելի է առանձնացնել այն իրադրային և հետաքրքրաշարժ խաղերը, որոնք համապատասխանում են դասի թեմային և կազմակերպվում են առանձին թեմաների ուսուցումը նախապատրաստելու, անցածը խորացնելու, ամրապնդելու և ամփոփելու նպատակով: Հետաքրքրաշարժ խաղերն անկասկած զգալի ազդեցություն են ունենում կրտսեր դպրոցականի զարգացման վրա, զարգացնում են հետաքրքրասիրությունը, հուզականությունը, շրջանցում են բացասական միտումները:

Ձևաբանական նախագիտելիքների ուսումնասիրման փուլում կարելի է կիրառել այնպիսի հետաքրքրաշարժ վարժություններ, որոնց միջոցով հնարավոր կլինի հասկանալ, թե որքանով են սովորողները յուրացրել այդ նախագիտելիքները:

Դիդակտիկ խաղն ունի որոշակի կառուցվածք, որի հիմնական բնութագրական կողմը խաղի՝ որպես ուսուցման եղանակի և երեխայի խաղային գործունեության համակցումն է:

Դիդակտիկ խաղի կառուցվածքի հիմնական բաղադրամասերն են.

- ուսուցողական խնդիրների առկայությունը՝ ուսուցողական նշանակությունը, որը որոշվում է ուսուցանվող ուսումնական նյութի բովանդակության հիման

վրա: Յուրաքանչյուր դիդակտիկ խաղի միջոցով սովորողները պիտի ձեռք բերեն որոշակի գիտելիքներ, ունակութուններ և հմտություններ,

- դաստիարակչական նշանակությունը, որը որոշվում է աշակերտների անձնային որոկների վրա խաղի թողած մանկավարժահոգեբանական ազդեցություններով,
- զարգացնող նշանակությունը պայմանավորված է խաղի՝ երեխայի անձի զարգացմանի նպաստող գործոններով,
- խաղային գործողություններն իրականացնում են երեխաները՝ առաջնորդվելով խաղի խնդիրներով,
- խաղի ընթացքի արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ են դիդակտիկ նյութեր, որոշակիորեն հիմնավորված պարագաներ և դրանց տեղին օգտագործում,
- ուսումնական գործունեությունը խաղի ժամանակ պիտի «թաքնված» լինի, բայց երկրորդական չհամարվի,
- խաղի կանոնները պիտի բխեն երեխաների շահերից, համապատասխանեն նրանց մտավոր, ֆիզիկական կարողություններին և հոգեկան գործընթացների տեսակներին,
- խաղի ընթացքը պիտի հանգամանալի և տվյալ դասարանի երեխաներին ընկալելի մակարդակով նկարագրվի:
- խաղի արդյունքների ամփոփումը պիտի իրականացվի անմիջապես խաղի ավարտից հետո: Անհրաժեշտ է գնահատել ոչ միայն առանձին խմբերի ձեռքբերումները, այլև յուրաքանչյուր երեխայի նվաճումները, ընդգծել հատկապես ոչ ակտիվ երեխաների հաջողությունները:

Այսպիսով մայրենիի դասերի ժամանակ յուրաքանչյուր խաղային գործունեություն իրականացնելուց առաջ պետք է կարևորել վերը նշված դիտարկումները՝ հստակորեն որոշելով, թե ինչպիսի ուսումնական խնդիրներ պիտի լուծվեն դրանց միջոցով. ոչ միայն՝ ի՞նչ պիտի ուսուցանվի, այլև՝ ի՞նչ նպատակով՝ ամրակայմա՞ն, համակարգմա՞ն, ամփոփմա՞ն, թե՞ որևէ նոր ուսումնական նյութի ընկալմանը նախապատրաստելու:

2.2 Ձևաբանական գիտելիքների ուսումնասիրումը իրադրային և հետաքրքրաշարժ խաղերի կիրառման ճանապարհով,արդյունքների վերլուծություն

Ձևաբանական գիտելիքների ուսումնասիրումը տարրական դասարաններում կարելի է իրականացնել իրադրային և հետաքրքրաշարժ խաղերի կիրառման ճանապարհով, որը կօգնի աշակերտներին հեշտությամբ ներգրավվել ուսումնական գործընթացի մեջ և ձեռք բերել ձևաբանական գիտելիքների այն ծավալը, որը նախատեսված է ծրագրով:

Պրակտիկայի ընթացքում դիտումներ անցկացնելով տարրական դասարաններում, զրուցելով դասվարների հետ, փորձեցինք նախ ուսումնասիրել, թե տարրական դասարաններում մայրենիի դասաժամերին ինչպես է իրականացվում ձևաբանական գիտելիքների ուսումնասիրումը: Արդյունքում պարզեցինք, որ լեզվական գիտելիքների ուսումնասիրությունը իրականացվում է օրվա դասի թեմային համապատասխան՝ բնագրի շուրջ կատարվող աշխատանքի ժամանակ:

Ուսումնասիրության անցկացման նպատակն էր, պարզել, թե՛ տարրական դասարաններում ձևաբանական գիտելիքներն ուսումնասիրելիս ինչպիսի խաղեր են կիրառվում, արդյո՞ք արդյունավետ է դրանց կիրառությունը, ինչպես նաև անձնական օրինակով (մայրենիի դասերի ընթացքում տարաբնույթ խաղեր կիրառելով) ստուգել դրանց արդյունավետության աստիճանը ձևաբանական գիտելիքների ուսումնասիրման ընթացքում:

Մեզհամարկարևորէրտարրականդասարաններիուսուցիչներիկարծիքներնայնմասին,
թեորքանովենիրադրայինևհետաքրքրաշարժխաղերըարդյունավետձևաբանականգիտելիքներիուսումնասիրմանգործընթացում:Այսնպատակովկազմեցինքհարցախույզ
ևանցկացրինքտարրականդասարանների 16 ուսուցիչներիշրջանում:
Հարցաթերթիկիհարցերինկիցմենքներկայացրելէինքնաևայլպատասխան-տարբերակը,
հնարավորությունտալովուսուցիչներինազատարտահայտելուիրենցկարծիքները՝ելնելովտարրականդասարաններումդասիընթացքումկիրառածխաղերիփորձից:

Ստորև ներկայացնում ենք հարցախույզն ու արդյունքների վերլուծությունը:

1. Ի՞նչ եք կարծում ձևաբանական գիրելիքների ուսումնասիրման գործընթացում

կարևոր է իրադրային և հետաքրքրաշարժ խաղերի կազմակերպումը:

o Այո, քանի որ սովորողներին հետաքրքիր է:

o Ոչ, այնքան էլ արդյունավետ չէ:



Հարցաթերթիկի առաջին՝ ձևաբանական գիրելիքների ուսումնասիրման գործընթացում կարևո՞ր է արդյոք իրադրային և հետաքրքրաշարժ խաղերի կազմակերպումը, հարցի արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ հարցմանը մասնակից բոլոր՝ 16 ուսուցիչները (100%) միանշանակ արդյունավետ են համարում իրադրային և հետաքրքրաշարժ խաղերի կազմակերպումը ձևաբանական գիտելիքների ուսումնասիրման գործընթացում:

Այս հարցի պատասխանով մենք համոզվեցինք, որ ներկայումս ուսուցիչներն արդյունավետ համարելով խաղային տեխնոլոգիաները, դասի ընթացքում հաճախակի են կիրառում դրանք:

2. Ձեր կարծիքով դասի ո՞ր փուլում է նպատակահարմար կազմակերպել իրադրային և հետաքրքրաշարժ խաղերը:

o Խթանման փուլում

o Իմաստի ընկալման փուլում

o Կշռադատման փուլում

o Բոլոր փուլերում էլ կարելի է կազմակերպել

Հարցմանը մասնակցած 16 ուսուցիչներից 11-ը (68,8%) կարծում է, որ իրադրային և հետաքրքրաշարժ խաղերը կարելի է կազմակերպել ԽԻԿ համակարգով վարվող դասի բոլոր փուլերում, 2 (12,5%) ուսուցիչ կարծում է, որ կարելի է կազմակերպել խթանման փուլում, 1(6,2%) ուսուցիչ՝ իմաստի ընկալաման փուլում և 2(12,5%) ուսուցիչ էլ՝ կշռադատման փուլում:

Ամփոփելով պատասխանները եզրահանգեցինք, որ ուսուցիչների մեծ մասն իրադրային և հետաքրքրաշարժ խաղեր իրականացնում է ԽԻԿ համակարգով վարվող դասի բոլոր փուլերում: Մենք համամիտ ենք այդ կարծիքի հետ, միայն պետք է հաշվի առնել այն հանգամանքը, թե ինչ խնդիրներ պետք է լուծել կիրառվող

խաղի միջոցով:



3. Մայրենիի դասերի ընթացքում կազմակերպվող իրադրային և հետաքրքրաշարժ խաղերն ի՞նչ խնդիրներ են լուծում:

- Հաղորդակցական կարողությունների ձևավորում,
- Ձևաբանական գիտելիքների ձեռքբերում,
- Քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացում:

Հարցմանը մասնակցած 16 ուսուցիչներից 8 (50%)-ը համամիտ է, որ կազմակերպվող իրադրային և հետաքրքրաշարժ խաղերի միջոցով ձևավորվում են հաղորդակցական կարողություններ, 9 (56,3%)-ը՝ որ սովորողները ձեռք են բերում ձևաբանական գիտելիքներ, իսկ 10 (62,5%)-ը համամիտ են, որ զարգանում է քննադատական և ստեղծագործական մտածողությունը:

Կարևորելով ուսուցիչների կարծիքները համոզվեցինք, որ նրանցից շատերը համամիտ են, որ իրադրային և հետաքրքրաշարժ խաղերի միջոցով լուծվում են այս բոլոր երեք խնդիրները, որն էլ համընկնում է մեր ունեցած կարծիքի հետ:

4. Արդյո՞ք կարևոր է հաշվի առնել սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները իրադրային և հետաքրքրաշարժ խաղերը կազմակերպելիս:

o Այո՛, քանի որ. . . . .

o Ո՛չ, քանի որ. . . . .

Հարցմանը մասնակցած 16 ուսուցիչներից 9(56%)-ը պատասխանել է, որ խաղերի անցկացման համար կարևոր հանգամանք է սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները հաշվի առնելը, քանի որ խաղն ունի ուսուցանող նպատակ և եթե խաղերը չեն համապատասխանեն սովորողների տարիքին, ապա առ չմիարդյունք չեն ունենա: Իսկ ավելի պարզ կամ բարդ խաղային ինի ավիճակներն ու ղղակի չեն հետաքրքրի սովորողներին:

Նշենք նաև, որ հարցմանը մասնակի ցուցուցիչներից 7 (44%)-ը, այնքան էլ չի կարևորում սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները, նշելով, որ անկախ տարիքից խաղերը հետաքրքիր են բոլորի ինչ բոլոր խաղերն էլ ունեն ուսուցանող ամրապնդող նպատակ:

Ցավոք հարցմանը մասնակի ցոչ բոլորը ուսուցիչները կարևորեցին այն հանգամանքը, որ խաղերի ընտրության ի հիմքում միանշանակ սովորողների տարիքային և անհատական առանձնահատկություններն են:

- Այո, քանի որ ուսուցանող նպատակ ունի:
- Այո, քանի որ եթե իրադրային խաղերը համապատասխան չլինեն սովորողների տարիքին, ապա ոչ մի արդյունք չեն ունենա:

- Այո, քանի որ չի հետաքրքրի ավելի պարզ և ավելի բարդ խաղային իրավիճակը:
- Ոչ բոորին է բնորոշ:
- Իհարկե, քանի որ ամեն տարիքին համապատասխան խաղ պետք է կազմակերպել:
- Այո, քանի որ խաղային մեթոդը արդյունավետ է:
- Ոչ, խաղեր կարելի է կազմակերպել առաջին դասարանից սկսած:
- Ոչ, տարիքային առանձնահատկությունը կապ չունի, խաղերը հետաքրքիր են բոլորին:
- Ոչ, քանի որ այն ուսուցանող և ամրապնդող նպատակ ունի:

Ամփոփելով այս հարցի պատասխանները՝ կարելի է ասել, որ ուսուցիչների մեծ մասը կարևորում է երեխաների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները խաղերը կազմակերպելիս:



5. Ձեր կարծիքով կարևո՞ր է կազմակերպվող խաղերին լրջորեն պատրաստվել:

o Այո,

o Ոչ,

o Ոչ բոլոր խաղերին

Այս հարցին 16 ուսուցիչներից 11 (68,8%)-ը պատասխանել է, որ այո, իսկ 5 (31,3%)-ը կարծում է, որ ոչ բոլոր խաղերին պետք է լրջորեն պատրաստվել, իսկ ահա «Ոչ» պատասխանը ոչ ոք չի ընտրել:

Նշված պատասխաններից հստակ երևում է, որ ուսուցիչների մեծ մասը լիովին հասկանում է խաղի կարևորությունը և դասերի ընթացքում կիրառում է այն լրջորեն

պատրաստվելուց հետո, որն էլ հնարավորություն է տալիս եզրակացնել, որ ներկայումս ուսուցիչների մեծ մասը մեծ տեղ է հատկացնում ակտիվ մեթոդներին և սովորողներին արագ ներգրավում ուսումնական գործընթացի մեջ:



Ամփոփելով այս հարցի պատասխանները՝ կարելի է ասել, որ ուսուցիչների մեծ մասը կարևորում է երեխաների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները խաղերը կազմակերպելիս:

Այսպիսով, հարցմանը մասնակցած բոլոր 16 ուսուցիչները կարևորեցին իրադրային և հետաքրքրաշարժ խաղերի դերը ձևաբանական գիտելիքների ուսումնասիրման գործընթացում, սակայն ուսուցիչներից ոչ մեկը չնշեց, որ հենց խաղերն են, որ աշակերտներին ամբողջությամբ ներգրավվում են ուսումնական գործունեության մեջ իրենց կամքից անկախ, և յուրաքանչյուր նյութի ուսումնասիրաման համար անհրաժեշտ է ու կարևոր խաղի ճիշտ ընտրությունն ու կիրառումը:

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ,պատասխան հետազոտականհարցին	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ Մասնագիտական գրականության ուսումնասիրման, դասալսումների հատուկ նպատակով ուսումնասիրությունների ընթացքում ձեռք բերված արդյունքները վերլուծելով հանգել ենք հետևյալ եզրակացությունների. **1.** Ուսումնասիրելով և վերլուծելով լեզվական և մեթոդական գրականությունը, տարրական դասարաններում ուսումնասիրվող քերականական նախագիտելիքներն ու ձևաբանական տարրական գիտելիքները, եկանք այն եզրահանգման, որ տարրական դպրոցի սովորողների հաղորդակցման կարողությունների զարգացման, լեզվական գիտելիքների յուրացման և խոսքում ճիշտ գործածության համար անհրաժեշտ է իրականացնել արդյունավետ և նպատակաուղղված աշխատանք՝ կարևորելով խոսքի մասերի ճիշտ և տեղին գործածությունը խոսքում: 2. Ուսումնասիրելով և վերլուծելով մայրենիի տարրական դպրոցի չափորոշիչներն ու ծրագրերը, 1-4-րդ դասարանների դասագրքերը, եզրահանգեցինք, որ տարրական դասարանների մայրենիի դասագրքերում զետեղված քերականական նախագիտելիքներն ու ձևաբանական տարրական գիտելիքներն ընտրվում են չափորոշչին և ծրագրին համապատասխան և որ 1-2-րդ դասարաններում նախ սովորողներն ուսումնասիրում են քերականական գիտելիքներն, իսկ 3-4-րդ դասարաններում ձևաբանական տարրական գիտելիքները: Չափորոշչային և ծրագրային պահանջներին համապատասխան ուսուցման արդյունավետության

	համար կարևորվում են նաև ուսումնական գործունեության տեսակները, ուսուցանվող նյութն ու ուսուցման նպատակը: 3. Դասալսումների, դիտարկումների միջոցով պարզեցինք, որ տարրական դասարաններում ձևաբանական գիտելիքների ուսումնասիրրումն իրականացվում է դասագրքերում զետեղված վարժությունների գործնական կատարման ճանապարհով, հաճախակի չեն կրիառվում հետաքրքրաշարժ և իրադրային խաղեր, որն էլ դժվարացնում է ուսումնասիրվող նյութի ընկալումը:
Այլտեղեկատվություն	

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ասատրյան Մ.Ե., ժամանակակից հայոց լեզու: Ձևաբանություն: ՈՒս. ձեռնարկ հայկ. բանասիր. ֆակ. համար/Երևանի պետ. համալս., 4-րդ հրատ.: Եր.: Երևանի համալս. հրատ., 2004.432 էջ:

2.Բաղիկյան Խ. Գ., ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության տեսության և գործնականաշխատանքների ուսումնական ձեռնարկ: Եր.,2010, 264 էջ:

3.Գյուլամիրյան Ջ. Հ., Խաղալով սովորենք:/.-Եր.: «Զանգակ-97», 2009.- 80 էջ:

4.Գյուլամիրյան Ջ.Հ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա: «Զանգակ» հրատ.,2018.-344 էջ:

5. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 3: Մաս 1, Եր.: Էդիթ Պրինտ, 2011.- 88 էջ:

6. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 3: Մաս 2: Եր.: Էդիթ Պրինտ, 2011.-80էջ:

7. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 4: Մաս 1:Եր.: Էդիթ Պրինտ, 2012.-88 էջ:

8. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 4: Մաս 2: Եր.: Էդիթ Պրինտ, 2012.-80 էջ:

9. Եզեկյան Լ. Կ., Հայոց լեզու,-Եր.:Երևանի համալսարան հրատ., 2007թ.402 էջ:

10. Ենոքյան Տ.Վ., Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորումը իրադրային խաղերի միջոցով, Հայագիտական հանդես, Երևան 2019: